

(19), որ հնագոյն անունն է մեր կաթողիկոսներուն :

Հ. Գրիգորիս Վրդ. Գալեմբէարեան պատասխանելով սա հարցման՝ թէ «Ո՞վ է Զուղայեցի Յակոբ Դ. Կաթողիկոսին Յաջորդը», կը գրէ. «Յակոբ Կաթողիկոս իր յաջորդին մասին եղած հարցումներուն պատասխաններ է շատերուն առջեւ, թէ ինչպէս ինքն յառաջ որոշած է, այժմ ալ նոյնը կը բաղձայ, այս ինքն «Սահակն է իմ եւ Ս. Աթոռին ժառանգն» : Նաեւ Յակոբ Կաթողիկոսին սնարին մօտ հակող ականատես եւ ականջալուր անձեր եւ մասնաւորապէս Գրիգոր Վրդ. Կեսարացի եւ Աստուածատուր Վարդապետ 10 Օգոստոս 1680 թուակիր դրութեան մէջ կը վկայեն՝ թէ Հոգեւոր Տէրը էջմիածնի Աթոռին ժառանգ կը նշանակէ Սահակ Վարդապետը, սակայն ամէն խռովութեան առաջին առնելու դիտումով կը յարէ՝ թէ էջմիածնի միաբանները հակառակ իր կտակին, եթէ չուզեն Սահակ Վարդապետին կաթողիկոսացումը, թող իրենց թեկնածուն ընտրեն, եւ կը յանձնարարէ որ զայս հոգան եղիազար Կաթողիկոսն ու Մարտիրոս Վարդապետը (20) : Ըստ երեմիա Զելեպիի Յակոբ Կաթողիկոս արդէն տասը տարի առաջ Սահակն

(19) Ազգա. Բ. 2619. — Ստամպոլոյ Պատմ. էջ 603 :

(20) Նորայր Եպս. Պողարեան, Մայր Յուցակ Չեռագրաց Սրբոց Յակոբեանց, Բ. հատոր, Երուսաղէմ, 1953 թ. 59ա.